**Արձանագրություն N 2**
**Երևանի քաղաքապետարանի կարիքների համար ինտերակտիվ սենսորային մոնիտորի ձեռքբերման**
**«ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-26/275» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի**
**Протокол № 2**
**Заседание комиссии по процедуре закупки с кодом ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-26/275 для нужд мэрии города Ереван по покупка интерактивного сенсорного монитора**

Ք. Երևան
Г. Ереван
Նիստի անցկացման վայրը՝
Երևանի քաղաքապետարանի վարչական շենք (ք. Երևան, Արգիշտիի փողոց 1), 128 սենյակ
օրը՝ 26.06.2026թ.
ժամը՝ 10:00
Место проведения заседания.
Административное здание мэрии Еревана (г. Ереван ул. Аргишти 1), комната 128
день: 26.06.2026
время: 10:00
Մասնակցում էին՝

| | |
|---|---|
| Հանձնաժողովի նախագահ՝ | Ս. Մելքոնյան |
| Հանձնաժողովի անդամներ՝ | Ա.Մխիթարյան, Հ.Մխչյան |
| Հանձնաժողովի քարտուղար ՝ | Լ. Աղաջանյան |

Участвовали

| | |
|---|---|
| Председатель комиссии: | С. Мелконян |
| Члены комиссии: | А. Мхитарян, Г. Мхчян |
| Секретарь комисии: | Л. Агаджанян |

**1. «ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-26/275» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում 25.06.2026թ. ստացված հարցման և 26.06.2026թ. դրա վերաբերյալ պարզաբանում տրամադրելու մասին**
**О запросе, полученном 25.06.2026г., и предоставлении разъяснений по нему 26.06.2026г. в рамках процедуры закупки с кодом « ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-26/275»**

-----------------------------------------------------------------------------

(Ս. Մելքոնյան, С. Мелконян)

1.1 Ընդունել ի գիտություն, որ 25.06.2026թ. էլեկտրոնային աճուրդի eauction.armeps.am էլեկտրոնային հարթակում «ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-26/275» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում ստացվել է հարցում, որին ի պատասխան գնահատող հանձնաժողովի կողմից տրվել է պարզաբանում 26.06.2026թ.-ին: Ստորև ներկայացվում է հարցումների և պարզաբանումների վերաբերյալ տեղեկատվությունը:

**Հարցադրում 1.**

Հարգելի բարեկամնե՛ր. Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 1-ի մասի պահանջների, խնդրում ենք տալ պաշտոնական պարզաբանում հետևյալ հարցերին՝ 1) Հրավերով պահանջվում է ներկայացնել ոչ պակաս, քան 88 դյույմ անկյունագիծ ունեցող ինտերակտիվ մոնիտոր: Մինչդեռ նույն հրավերով պահանջված 4K/UHD (3840 × 2160 պիքսել) կետայնություն և 16:9 ֆորմատ ունեցող մոնիտորները զուտ ֆիզիկայի օրենքներով պայմանավորված կարող են ունենալ կամ 86 կամ էլ 98 դյույմ անկյունագիծ: Արդյո՞ք մոնիտորի անկյունագիծը նշելիս տեղի չի ունեցել տպագրական վրիպակ: Խնդրում ենք հստակ նշել պահանջված մոնիտորի անկյունագծի նվազագույն ընդունելի չափսը: 2) Խնդրում ենք տեղեկացնել պահանջված մոնիտորի նվազագույն ընդունելի Android և Windows

համակարգերում հպումների միաժամանակյա քանակի և ընդհանուր հիշողության ծավալի մասին, ինչպես նաև նշել ինտերակտիվ համակարգի տեսակը:

**Запрос 1:**

Уважаемые коллеги,

В соответствии с требованиями части 1 статьи 29 Закона Республики Армения «О закупках», просим предоставить официальное разъяснение по следующим вопросам:

В приглашении требуется представить интерактивный монитор с диагональю не менее 88 дюймов. Между тем, мониторы с разрешением 4K/UHD (3840 × 2160 пикселей) и форматом 16:9, предусмотренные тем же приглашением, исходя исключительно из физических параметров, могут иметь диагональ либо 86, либо 98 дюймов.

Не является ли указанная диагональ монитора результатом технической или типографской ошибки?

Просим четко указать минимально допустимый размер диагонали требуемого монитора.

Просим сообщить минимально допустимое количество одновременных касаний в системах Android и Windows для требуемого монитора, объем общей памяти, а также указать тип интерактивной системы.

**Պարզաբանում 1.**

Հարգելի մասնակից, պատասխան Ձեր հարցման՝ հայտնում ենք հետևյալը.

Հրավերով սահմանված է ինտերակտիվ սենսորային մոնիտորի էկրանի անկյունագիծ՝ «ոչ պակաս, քան 88 դյույմ»: Նշված պահանջը տպագրական վրիպակ չի պարունակում: Ընդունելի են բոլոր այն առաջարկները, որոնցում առաջարկվող սարքի էկրանի անկյունագիծը կազմում է առնվազն 88 դյույմ և համապատասխանում է տեխնիկական բնութագրով սահմանված մնացած պահանջներին: Հետևաբար, 88 դյույմից փոքր անկյունագիծ ունեցող սարքերը չեն համարվի պահանջին համապատասխան:

Տեխնիկական բնութագրով սահմանված են հետևյալ նվազագույն պահանջները՝

ներկառուցված օպերացիոն համակարգ՝ առնվազն Android 11,

պրոցեսոր՝ ոչ պակաս, քան քառամիջուկ (Quad-Core) ARM Cortex-A55,

օպերատիվ հիշողություն՝ ոչ պակաս, քան 8 ԳԲ:

Տեխնիկական բնութագրով Android և Windows համակարգերում միաժամանակյա հպումների քանակի, ընդհանուր հիշողության ծավալի (ROM) և ինտերակտիվ համակարգի (ինֆրակարմիր, օպտիկական և այլն) տեսակի վերաբերյալ առանձին պահանջներ սահմանված չեն, ուստի տվյալ պարամետրերը կարող են լինել ցանկացած՝ պայմանով, որ առաջարկվող ապրանքը լիովին համապատասխանում է հրավերով սահմանված մնացած տեխնիկական պահանջներին:

**Разъяснение 1.**

Уважаемый участник

В ответ на ваш запрос мы хотели бы сообщить вам следующее:

В приглашении указана диагональ экрана интерактивного сенсорного монитора как «не менее 88 дюймов». Указанное требование не содержит опечатки. Принимаются все предложения, в которых предлагаемое устройство имеет диагональ экрана не менее 88 дюймов и соответствует остальным требованиям, указанным в технических характеристиках. Следовательно, устройства с диагональю менее 88 дюймов не будут считаться соответствующими требованиям.

В технических характеристиках указаны следующие минимальные требования:

встроенная операционная система: не менее Android 11,

процессор: не менее четырехъядерный (Quad-Core) ARM Cortex-A55,

оперативная память: не менее 8 ГБ.

Технические характеристики не содержат отдельных требований к количеству одновременных касаний, общему объему памяти (ПЗУ) и типу интерактивной системы (инфракрасная,

оптическая и т. д.) в системах Android и Windows, поэтому эти параметры могут быть любыми, при условии, что предлагаемый продукт полностью соответствует остальным техническим требованиям, изложенным в приглашении.

*1.2 Հաստատել հրավերի պարզաբանման մասին հայտարարության տեքստը:*

*1.2 Утвердить текст объявления о разъяснении приглашения.*

*Ընդունվել է որոշում՝ կողմ – 3, դեմ - 0:*

*Принято решение: за – 3, против – 0.*

| | | |
|---|---|---|
| Հանձնաժողովի նախագահ՝<br>Председатель комиссии | ------------------------------ | Ս.Մելքոնյան<br>С. Мелконян |
| Հանձնաժողովի անդամներ՝<br>Члены комиссии | ------------------------------ | Ա.Մխիթարյան<br>А. Мхитарян |
| | ------------------------------ | Հ.Մխչյան<br>Г. Мхчян |
| Քարտուղար՝<br>Секретарь комиссии | ------------------------------ | Լ. Աղաջանյան<br>Л. Агаджанян |